Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 7

ԱՈՒԴԻՏ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ

Քննաթերթ

Խնդիր 1	20 միավոր
Խնդիր 2	20 միավոր
Խնդիր 3	30 միավոր
Խնդիր 4	20 միավոր
Խնդիր 5	10 միավոր
Ընդամենը	100 միավոր

Հունվար 2026

ԽՆԴԻՐ 1

ա)

Բացատրել օբյեկտիվության հիմնարար սկզբունքը՝ համաձայն Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի:

Ներկայացնել հինգ հիմնական վտանգները, որոնք կարող են սպառնալ օբյեկտիվությանը:

(8 միավոր)

բ)

Քննարկել ստորև ներկայացված երկու անկախ իրավիճակները:

Իրավիճակ 1

«Արփի աուդիտ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Լևոն Սթրոյ» ՓԲԸ-ի աուդիտորը վերջին 12 տարիների ընթացքում: Տարեկան աուդիտի վճարը կազմում է աուդիտորական ընկերության ընդհանուր եկամուտների շուրջ 9%-ը:
2024թ-ին «Լևոն Սթրոյ»-ը նախատեսում է ներգրավել ներդրող և խնդրել է «Արփի աուդիտ»-ին աջակցել ֆինանսական մոդելի պատրաստման և ներդրումային համաձայնագրի կազմման հարցում: Այդ խորհրդատվական ծառայության վճարը կկազմի աուդիտորական ընկերության տարեկան եկամուտների ևս 8%-ը:
Ծառայությունը առաջարկում է իրականացնել նույն գործընկերը, ով ստորագրում է աուդիտորական եզրակացությունը:

Իրավիճակ 2

Ասթինե Մանուկյանն աշխատում է «Սալմաստ Տեք» ՍՊԸ-ում՝ որպես հաշվապահ: Վերջին երկու տարիների ընթացքում նա ակտիվորեն մասնակցել է ընկերության ներքին վերահսկողության համակարգի նախագծմանն ու ներդրմանը:
Ընկերությունը նախատեսում է ստեղծել ներքին աուդիտի ստորաբաժանում և Ասթինեին առաջարկել է ներքին աուդիտորի պաշտոնը:

Պահանջվում է.
Յուրաքանչյուր իրավիճակի համար՝

- թվարկել օբյեկտիվությանը սպառնացող վտանգները
- առաջարկել համապատասխան նախազգուշական միջոցներ

(12 միավոր)

(Ընդամենը՝ 20 միավոր)

ԽՆԴԻՐ 2

«Նորման Հիթ» ՍՊԸ-ն զբաղվում է արդյունաբերական չիլերների արտադրությամբ: Ստորև ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության քաղվածքը՝

Մլրդ դրամ	**31.12.2025**	**31.12.2024**
Ընդամենը ակտիվներ, այդ թվում՝	**48**	**92**
Պաշարներ	14	37
Դեբիտորական պարտքեր	18	29
Դրամական միջոցներ	2	11
Պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	21	24
Բանկային վարկեր	12	15
Այլ պարտավորություններ	20	24
Սեփական կապիտալ	**(5)**	**29**

2025թ-ին Ընկերությունը ձևավորել է 6 մլրդ դրամի չափով երաշխիքային սպասարկման պահուստ:

ա)

Քննարկել, թե արդյոք նախորդ տարվա էականությունը կարող է կիրառվել ընթացիկ տարվա աուդիտի համար:

(3 միավոր)

բ)

Բացատրել, թե ինչ է աուդիտորական ռիսկը և ներկայացնել դրա բաղադրիչները:

(3 միավոր)

գ)

Ֆինանսական տվյալների հիման վրա նշել աուդիտի հիմնական ռիսկային բնագավառները, որոնց վրա պետք է կենտրոնանա աուդիտորը՝ հիմնավորելով յուրաքանչյուր ընտրությունը:

(14 միավոր)

(Ընդամենը՝ 20 միավոր)

ԽՆԴԻՐ 3

«Ֆայտոն» ՍՊԸ-ն փոքր ընկերություն է, որն իր վաճառքների, գնումների և գլխավոր գրքի հաշվառումն իրականացնում է փոքր անհատական համակարգչի միջոցով՝ օգտագործելով ստանդարտ համակարգչային հաշվապահական ծրագիր: Ընկերությունը ապրանքներ է գնում խոշոր արտադրողներից և դրանք վաճառում խանութներին, որոնք ապրանքները կամ վաճառում են, կամ վարձակալությամբ տրամադրում վերջնական սպառողներին: Ապրանքների շարքում ներառված են ջրահեռացման սարքեր, գեներատորներ, չիլերներ և ջեռուցման կաթսաներ:

Ձեզ խնդրել են իրականացնել գլխավոր գրքի համակարգի աուդիտ, որպեսզի հավաստիանաք, որ գործառնությունները տարվա ընթացքում ճշգրիտ են գրանցվել: Տարեվերջին ձևավորում է հաշվեկշիռ (շրջանառության տեղեկագիր), որն օգտագործվում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ընկերությունն ունի հաշվապահ, ով պատասխանատու է վաճառքների և գնումների գործառնությունների, ինչպես նաև գլխավոր գրքի հաշվառման համար: Տվյալները գլխավոր գիրք են մուտքագրվում հետևյալ կերպ.

ա) Ֆինանսական տարվա սկզբում գլխավոր գրքի բոլոր հաշիվների մնացորդները սահմանվում են զրո (օգտագործելով հաշվապահական ծրագրի ստանդարտ ընթացակարգը):

բ) Ստորև ներկայացված ընթացակարգերը վերաբերում են գնումների գործառնություններին.
(i) Գնումների մոդուլում հաշիվ-ապրանքագրերը մուտքագրվում են հետևյալ կերպ՝

- մուտքագրվում է գնումների անալիտիկ հաշիվը (գլխավոր գրքի համար),
- գնման գումարը,
- ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գումարը

Հաշիվ-ապրանքագրի ամբողջական գումարը գրանցվում է գնումների մոդուլում:

(ii) Ամսվա վերջում հաշվապահական համակարգը իքննաշխատ կերպով գրանցում է հետևյալ գործառնությունները.

1. Ամսվա ընթացքում գրանցված գնումների հաշիվ-ապրանքագրերի և կրեդիտ նոտաների(վերադարձների) ձևակերպում համապատասխան ծախսի սինթետիկ հաշվում և ԱԱՀ ընդհանուր գումարի ձևակերպում (միաժամանակ համակարգը արտածում է ամսվա ընթացքում գրանցված անհատական հաշիվ-ապրանքագրերի մանրամասները, որոնք կազմում են այդ ընդհանուր գումարը):
2. Գնումների մոդուլում ամսվա ընթացքում գրանցված վճարումների, ստացված զեղչերի և ճշգրտումների ընդհանուր գումարը (համակարգը արտածում է զեղչերի և ճշգրտումների մանրամասները):

3. Այն դեպքերում, երբ գլխավոր գրքում տվյալ հոդվածի համար առանձին հաշիվ գոյություն չունի, համակարգիչը տվյալ գումարները գրանցում է կրեդիտորական պարտքերի միջանկյալ հաշվում: Բոլոր ճշգրտումները նույնպես գրանցվում են միջանկյալ հաշվում:

գ) Վաճառքների մոդուլի տվյալները գլխավոր գրքում գրանցվում են նույն սկզբունքով, ինչպես գնումների մոդուլի տվյալները:

Ձեռքով գրանցվող հաշվապահական ձևակերպումներ կատարվում են հետևյալ դեպքերում.

- տարվա սկզբում սկզբնական մնացորդների մուտքագրում,
- դրամական միջոցների փոխանցումներ (բացառությամբ վաճառքների և գնումների մոդուլների միջոցով իրականացվող դրամական միջոցների փոխանցումների),
- կանխիկ ցածրարժեք վճարումներ,
- աշխատավարձի ամփոփ տվյալներ (տեղեկատվությունը ստացվում է աշխատավարձի համակարգից),
- ճշգրտումներ, որոնք ներառում են՝
    - Սխալների ուղղում
    - Վաճառքների և գնումների միջանկյալ հաշիվներում գրանցված հոդվածների կարգավորում

Ձեռքով հաշվապահական գրանցումները պետք է հաստատվեն գործադիր տնօրենի կողմից՝ նախքան գլխավոր գրքում գրանցելը:

Սկզբնական մնացորդները գլխավոր գրքում գրանցվում են այն ժամանակ, երբ նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատվում են աուդիտորների կողմից:

Չնայած այն հանգամանքին, որ աշխատակիցների աշխատավարձերը հաշվարկվում են այլ հաշվապահական ծրագրի միջոցով, աշխատավարձի ընդհանուր ծախսը ձեռքով է մուտքագրվում գլխավոր գրքում: Աշխատավարձի ծախսը հաշվարկվում է աշխատավարձի համակարգի ամսական ամփոփ տվյալների հիման վրա, որոնք ներբեռնվում են Excel-ի միջոցով , որի արդյունքում ծախսը դասակարգվում է՝ ըստ հետևյալ կատեգորիաների՝

- տնօրենների աշխատավարձ,
- վաճառքի անձնակազմի աշխատավարձ,
- պահեստի աշխատակազմի աշխատավարձ,
- վարչական աշխատակազմի աշխատավարձ:

Պահանջվում է.

ա)

Թվարկել

- վաճառքների համակարգի **երեք վերահսկողության նպատակ**, և
- գնումների համակարգի **երեք վերահսկողության նպատակ**:

(6 միավոր)

բ)

Թվարկել և նկարագրել այն աուդիտորական աշխատանքները, որոնք Դուք կկատարեիք գլխավոր գրքի համակարգի աուդիտի շրջանակներում, մասնավորապես՝

(i) Նկարագրել այն աուդիտորական ընթացակարգերը, որոնք կիրականացնեիք գլխավոր գրքում գրանցված գնումների գործառնությունների ճշգրտությունը ստուգելու նպատակով:

(5 միավոր)

(ii) Նկարագրել այն աուդիտորական ընթացակարգերը, որոնք կիրականացնեիք գլխավոր գրքում գրանցված հաշվապահական ձևակերպումների հավաստիությունն ու ճշգրտությունը ստուգելու նպատակով: Միաժամանակ հակիրճ նկարագրել, թե ինչ այլ թեստեր կկատարեիք գլխավոր գրքի տարեվերջյան մնացորդների ճշգրտությունը հավաստիացնելու համար:

(15 միավոր)

***Ծանոթագրություն**. Ենթադրվում է, որ վաճառքների գործառնությունները ճշգրիտ են գրանցված և ճիշտ են մուտքագրվել գլխավոր գրքում:*

գ) Բացատրել աուդիտորի պատասխանատվությունները սկզբնական մնացորդների առնչությամբ:

(4 միավոր)

(Ընդամենը՝ 30 միավոր)

ԽՆԴԻՐ 4

Դուք հանդիսանում եք «Էյր Աուդիտ» ՍՊԸ-ի աուդիտորը: Ձեր հաճախորդը՝ «Մեգա պոլիս» ՓԲԸ-ն, ունի.

- խոշոր ներդրումային գույք՝ գնահատված անկախ գնահատողի կողմից
- դատական վեճ՝ կառուցապատման թերությունների վերաբերյալ, որի համար ստացվել է իրավաբանական կարծիք
- անավարտ շինարարություն, որը գնահատվել է ընկերության ներքին աշխատակցի կողմից

Պահանջվում է.

Նկարագրել այն հարցերը և ապացույցները, որոնք կդիտարկեք փորձագետների աշխատանքի հուսալիությունը գնահատելու համար՝

ա) Իրավաբանական կարծիք

(7 միավոր)

բ) Անկախ գնահատողի կողմից ներդրումային գույքի գնահատում

(7 միավոր)

գ) Ներքին գնահատողի կողմից իրականացված անավարտ շինարարության գնահատում

(6 միավոր)

(Ընդամենը՝ 20 միավոր)

ԽՆԴԻՐ 5

Դուք հանդիսանում եք «Հանս Քրիստիան Անդերսեն» արտադրական ընկերության ավագ աուդիտորը: Այժմ դուք պլանավորում եք առևտրային դեբիտորական պարտքերի աուդիտը 31 դեկտեմբերի 2025թ ավարտվող տարվա համար: 31 դեկտեմբերի 2025թ դրությամբ «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի դեբիտորական պարտքերի մնացորդը կազմում է 130մլն դրամ: «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի հաճախորդների թիվը գերազանցում է 1,000ը, այնինչ դրանցից 10ի պարտքը կազմում է յուրաքանչյուրի գծով շուրջ 4.5մլն դրամ: «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի վերահսկողության թեստերը բացահայտել են վաճառքներին և դեբիտորական պարտքերին առնչվող թերություններ: Նախորդ տարվա աուդիտների ժամանակ արտաքին հաստատման նամակների արդյունքում մի քանի հաճախորդների մնացորդների գծով հայտնաբերվել են անճշտություններ:

1. «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի ներքին հսկողության թեստերը հայտնաբերել են, որ սովորաբար հաշիվ-ապրանքագրերը դուրս են գրվում մատակարարման ամսաթվից հետո:
   Նշել այն թեստը, որն անհրաժեշտ է իրականացնել տարեվերջի դրությամբ դեբիտորական պարտքերի թերագնահատման ծավալը գնահատելու համար:

   ա) Աուդիտորը պետք է տարեվերջից անմիջապես առաջ դուրս գրված հաշիվ-ապրանքագրերը համադրի վաճառքի հաշվապահական ձևակերպումների հետ
   բ) Աուդիտորը պետք է տարեվերջից անմիջապես հետո դուրս գրված հաշիվ-ապրանքագրերը համադրի վաճառքի հաշվապահական ձևակերպումների հետ
   գ) Աուդիտորը պետք է տարեվերջից անմիջապես առաջ դուրս գրված հաշիվ-ապրանքագրերը համադրի բեռնագրերի հետ
   դ) Աուդիտորը պետք է տարեվերջից անմիջապես առաջ բոլոր բեռնագրերը համադրի հաշիվ-ապրանքագրերի հետ

2. Ընտրեք այն հաստատման տեսակը և վերջինիս ընտրության հիմնավորումը, որը պետք է ուղարկվի «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի հաճախորդներին:

   ա) Դրական հաստատման հարցում, քանի որ «Հանս Քրիստիան Անդերսեն»-ն ունի մեծ քանակի հաճախորդներ
   բ) Բացասական հաստատման հարցում, քանի որ հավանական է, որ «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի հաճախորդները կանտեսեն նամակները
   գ) Դրական հաստատման հարցում, քանի որ էական խեղաթյուրման ռիսկը բարձր է
   դ) Բացասական հաստատման հարցում, քանի որ նախորդ տարի անճշտություններ են հայտնաբերվել

(2 միավոր)

3. Հաստատման նամակների ուղարկումից հետո դուք ստացել եք նամակ, որի արդյունքում առկա է անհամապատասխանություն «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի մնացորդների հետ:
Հետևյալ աուդիտորական ընթացակարգերից որ երկուսն են ամենատեղինը նշված իրավիճակում:

ա) Հաճախորդի կողմից մատնանշված փոխանցումները համադրել դրամական միջոցների շարժի հետ
բ) Ուղարկել երկրորդ հաստատման նամակը՝ խնդրելով վերստուգել այն
գ) Պահանջել, որ «Հանս Քրիստիան Անդերսեն»-ը ճշգրտի տվյալ հաճախորդի գծով դեբիտորական պարտքի մնացորդը
դ) Ստուգել, թե արդյոք հաճախորդի կողմից չմատնանված հաշիվ-ապրանքագրերը համապատասխանում են տարեվերջին նախորդող ժամանակահատվածում ապրանքների բեռնագրերին

(2 միավոր)

4. Հաստատման նամակների ուղարկումից հետո հաճախորդներից մեկը նշել է, որ չի կարող պատասխանել նամակին, քանի որ դա հակասում է իր ներքին քաղաքականությանը:
Հետևյալ աուդիտորական ընթացակարգերից որ երկուսն են ամենատեղինը նշված իրավիճակում:

ա) Ստուգել տարեվերջին հաջորդող ժամանակահատվածում տվյալ հաճախորդից ստացված դրամական միջոցների մուտքերը
բ) Ուղարկել երկրորդ հաստատման նամակը՝ խնդրելով, որ հաճախորդի աուդիտորը հաստատի այդ նամակը
գ) Ուսումնասիրել տարեվերջին անմիջապես նախորդող ժամանակահատվածում տվյալ հաճախորդից ստացված դրամական միջոցների մուտքերը
դ) Ստուգել հիմնավորող փաստաթղթերը, ինչպիսիք են՝ հաշիվ-ապրանքագրերը և բեռնագրերը

(2 միավոր)

5. «Հանս Քրիստիան Անդերսեն»-ի տնօրենը հրաժարվել է հաստատման նամակ ուղարկել իր հիմնական հաճախորդներից մեկին՝ պատճառաբանելով, որ հաճախորդի հետ ունի մտերիմ հարաբերություններ և նամակի ուղարկումը կարող է վիրավորական թվալ նրա կողմից: Աուդիտորի կողմից մերժման պատճառները համարվել են ողջամիտ:
Ինչպիսի՞ն պետք է լինեն գործողությունները:

ա) Տվյալ հաճախորդին փոխարինել այլ հաճախորդով, որն ունի միևնույն բնութագրերը, որպեսզի պահպանվի ընտրանքի ներկայացուցչականությունը

բ) Ուղարկել նամակը, ինչպես պլանավորվել էր, քանի որ աուդիտորի պատասխանատվությունը բաժնետերերի նկատմամբ է և ոչ ղեկավարության նկատմամբ
գ) Տեղեկացնել, որ նամակի ուղարկումից հրաժարումը դիտվում է՝ որպես շրջանակի սահմանափակում և կհանգեցնի աուդիտորական կարծիքի ձևափոխման
դ) Արտաքին հաստատման ընթացակարգերը իրականացնել ընտրանքի մնացած տողերի նկատմամբ, իսկ տվյալ հաճախորդի գծով իրականացնել այլընտրանքային աուդիտորական ընթացակարգեր

(2 միավոր)

(Ընդամենը՝ 10 միավոր)